

ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի շնորհավորական խոսքը Ուսանողների միջազգային օրվա առիթով

Սիրելի՛ ուսանողներ,

Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ: Առաջադեմ, ակտիվ և հետաքրքրասեր ուսանողությունը մեր երկրի ապագայի երաշխիքն է: Շուտով կգա այն օրը, երբ դուք՝ երիտասարդ մասնագետներ, քաղաքական գործիչներ, ձեռներեցներ, կսկսեք ձեր աշխատանքային գործունեությունը՝ իրականացնելով ձեր երազանքները, շենացնելով և զարգացնելով մեր երկիրը: Վաղը դուք կգբաղեցնեք ձեր ուսուցիչների տեղը՝ փոխանցելով ձեր երեխաներին գիտելիքներ և Հայրենիքի հանդեպ ձեր սերը: Դուք կնվաճեք նոր ստեղծագործական բարձունքներ՝ առաջ տանելով նաև հայ մշակույթը, գիտությունը, արվեստը: Չափազանց կարևոր է անել ամեն ինչ, որպեսզի դուք կյանք մտնեք արդիական գիտելիքներով, առաջադեմ և նորարար գաղափարներով ու հմտություններով: Այսօր ես ցանկանում եմ հայտարարել մոտ ապագայում ստեղծվելիք <<Սյունիքի զարգացման հիմնադրամի>> անդրանիկ ծրագրերից մեկի մասին: Այն է՝ Սյունիքի լավագույն ուսանողներին հնարավորություն տալ իրենց ուսումը շարունակելու աշխարհի լավագույն բուհերում: Պայմանը միայն մեկն է՝ բուհն ավարտելուց հետո վերադառնալ Սյունիք ու կիրառել ստացած գիտելիքները հօգուտ սյունեցիների, աշխատել այստեղ՝ հայրենիքում, որը լուսավոր երիտասարդության գաղափարների և գիտելիքների մեծ կարիք ունի:

Սիրելի՛ ուսանողներ, յուրաքանչյուր անձ և յուրաքանչյուր հասարակություն ստեղծում է իր ապագան սեփական ձեռքերով: Մենք հույս ունենք, որ դուք՝ ձեր ձգտումներով, երազանքներով ու հաստատակամությամբ, կստեղծեք ուժեղ և ծաղկուն ապագա սյունեցիների գալիք սերունդների համար: Կրկին շնորհավորում եմ ձեզ:

ՀՀ Սյունիքի մարզպետ

Վ. Հակոբյան

2016թ.